

րուք մը՝ պաղութիւն մը չծագեցաւ մէջերնին . ընկերութիւննին զուարձալի եղաւ, բարեկամութեամբ կենաց բեռները թեթևացան, ժամանակնին պտղաբերութեամբ անցաւ, մտքերնին այնչափ գանձեր դիզուեցան՝ որչափ առանձին անկարելի էր ժողվել. և իրենք եղան Ամերիկայի ամենէն իմաստուն մարդիկը : Ա'ահը միայն կրցաւ զիրենք բաժնել. բայց իրենց օրինակովը շատ ընկերութիւններ հաստատուեցան, և ինչուան հիմա կը տեեն Աւրոպայի ու Ամերիկայի մէջ. մշտատե ալ կ'ըլլան Ճեմարաններու պէս՝ թէ որ մեռած ընկերներուն տեղը ուրիշներ առնուին : Իսկ ան 24 կանոնները ասոնք են, մէկ քանին դուրս թողով՝ որ այնչափ մեզի հարկաւոր չսեպեցինք .

ա . Ա'ս օրերս մեր ժողովքին օգտակար բան մը կարդացի՞ր պատմական, քաղաքական, բարոյական, աշխարհագրական, բնագիտական, և այլն : թ . ( ) օգտակար պատմութիւն մը կարդացի՞ր կամ լսեցի՞ր :

թ . Քաղաքացեաց մէկուն վրայ լսեցի՞ր սխալմունք մը, ի՞նչ էր պատճառն ու հետեանքը :

թ . Լսեցի՞ր թէ մէկը յաջողութեմը հասեր է, ի՞նչ կերպով :

թ . Գիտես թէ ի՞նչպէս մէկը հարըստութեան ու բազդի հասեր է :

թ . Դ'անըւորներուդ վրայ մեզի խելք սորվելու գործք մը տեսա՞ր :

թ . Լսեցի՞ր դիպուած մը լաւ կամ չար կրքէ առաջ եկած :

թ . Հիւանդացար, կամ ուրիշ հիւանդ մը ի՞նչ դեղով առողջացաւ :

թ . Արդեօք Ճամբորդ մը կայ, կը ռնամնք հետը բան մը խաւըել :

թ . Գիտես թէ կերպով մը ընկերութիւննիս կարենայ օգնել քեզի, կամ ընկերներէդ մէկուն, կամ դըրսէն մէկուն կամմարդկութեան :

ժա . ( ) տար մարդ եկեր է քաղաքնիս, ի՞նչ լսեցի՞ր անոր վրայ . կամ կընանք մէկ օգուտ մը առնուլ անկէ կամ ընել անոր :

ժա . Այս Ճանճամաս յաջող տղայ մը որուն կարենայ ընկերութիւննիս ձեռք դնել :

ժա . Ա'էկն որ զքեզ կամ ընկերութիւնը նախատեց՝ ի՞նչպէս պաշտպանեցիր :

ժա . Ի՞նչ պակսութիւն կը գտնեն զրսինները մեր ընկերութեանը վրայ :

ժա . Ուրիշէ մը օգնութիւն մը գըտե՞ր ես :

ժա . Ա'եր ժողովքին կանոններուն մէջ մէկ փոխելու կամ շտկելու բան մը կը գտնեմ :

Այս գրեթէ ասոնք են Փրանքինեան ընկերութեան խօսից կանոնները . կարդացողը մէկէն կ'իմանայ թէ ի՞նչ դիրիին և օգտակար են . և թէ որ մէկը կամ ընկերութիւն մը 'ի գործ դնելու ըլլայ ասիկայ, պէտք է զգոյշինելացի և հաստատ կանոններ դնէ իրեն ընկերութեանը, որ թէ իրենք իրենց ուղիղ վախճանին համին և թէ ուրիշներուն ծաղրելի ու կասկածելի չըլլան :


Հ . Դ . Մ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼՈՒՔ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Արքայան Պաղեն Ա'մինարէտան Ա'մաբանութեան ըլլած պարգև :

ՀՌՈՎՄԱՅ Հիմակուան Արքազան հայրապետը Արիգոր Ժ.Ջ., որ 'ի սկըզբանէ հետէ մեծ սէր, գութ և համարմունք ունեցած է մեր Հայոց ազգին վրայ, և շատ բանի մէջ յայտնի ալ ցցուցեր է, իր հայրական սիրոյն և խնամոցը մէկ նոր նշանն ալ աս տարւոյս սկիզբը ցցուց մեր Ա'մաբանութեանը . և աս իրեն սիրոյն ու առատաձեւնութեան ցոյցը մարմարիոնէ իրեն գեղեցիկ արձանն է՝ որուն պատկերքն ու ստորագրութիւնը հոս կըդնենք :



Իտալիայի մէջ, ունաե բոլոր կը լուսպայի մէջ անուանի արձանագործը Հովհաննէփ Ֆիապրիս, որ սովորաբար Հռովմէլը կենայ, ուղելով իր երախտագիտութիւնը Արբազանին յայտնել ուսկից շատ բարիք տեսեր է, սրբազանին աս գեղեցիկ արձանը փորեր ու ընծայեր է, ջանալով որ որչափ կարելի է աս ձեռագործին վրայ անոր ըրած մեծամեծ գործքերը նկարագրէ : Այնչափ լաւ յաջողեր է իրեն դիտմունքն ու աշխատանքը, որ կրնանք ըսելթէ ինչպէս որ Արբազան Վահանայապետին ըրած գործքերը իրենց մեծութեանը մէջ սքանչելի են, նոյնպէս ալ աս քանդակագործին բընական ու գեղեցիկ ձեռագործը իրեն պզտիկութեանն ու տեսքին մէջ :

Այսանը իր պատուանդանովը ( որ պատկերին մէջ միայն ասոնք կ'երևնան ) դրուած է մոխրագոյն կանաչ քարէ խարսխի մը վրայ, և առանցքի վրայ կը դառնայ . ան խարըսին առջեկ կողմը ոսկէզօծ գրերով աս արձանագիրը կայ .

GREGORIO. XVI. PONT. MAX.

BENEFATORI. SVO.

SACRI. PRINCIPATVS. AN. VIII. INEVNTI.  
JOSEPHVS. FABRIS. D. D. D.

Այսինքն ԳՐԻԴՈՐԻ ԺԶ .  
ՄԵԾԻ ՔԱՀԱՆԱՑԱՊԻԵՏԻ  
ԲԱՐԵՐԱՐԻՒ ԻՒՐՈՒՄ  
Ի ՄՈՒՏՍ ՈՒԹԵՐՈՐԴԻ ԱՄԻ  
ԱՍՏՈՒԱՆԱՐԵԱԼ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ  
ՑՈՎՍԻՓ ՔԱՊՐԻՍ  
ԸՆԾԱՑԷ, ՆՈՒՐԻՒ, ԶՈՒ :

Արձանին պատուանդանը քառակուսի է՝ Վարրարայի մարմարինէ, ու ամէն մէկ երեսը գեղին մարմարինի վրայ փորուած չորս բարձրաքանդակներ ագուցած են . աս պատուանդանին վրան է ձիւնի պէս ձերմակ քարէ փորուած աթոռը, Արբազանն ալ անոր վրայ քահանայապետական զգեստներովը նստած օրհնութիւն կուտայ : Աթոռին, շուրջաւին, ուրարին և

եռապսակ թագին շուրջքը բոլոր ոսկէզօծ են, բանուածքն ալ այնպէս բարակ որ կարծես թէ կիտուած է :

Այսէի բարձրաքանդակը տեաւնընդգառաջին տօնը կը ցուցընէ . որովհետեւ Արբազանը ան օրը ընտրուեցաւ գլուխ կաթուղիկէ եկեղեցւոյ . աս պատկերին երկու դին են Արօնից ու Գմբութեան պատկերները, վրան ալ մէկ կողմը քահանայապետական նշաններն ու իրեն Այկեղեցւոյ պաշտպանութեան համար շինած գիրքը, մէկալ կողմն ալ Անիենէ գետին երկու մեծագործ ջրանցները, որ իրեն քահանայապետութեան առջի տարիները շինուեցան՝ Ոփվոլի աւանը Ջրին վտանգներէն աղատելու համար :

Աւ որովհետեւ աս Արբազանին թագագրութեան հանդէսն եղած չեղած՝ Պոլոնիացիք ապստամբութեամբ ոտքելան, քանդակագործը երկրորդ խորաքանդակին մէջ ձեւացուցեր է սըրբոյն Պետրոսի նաւակը, որ կատաղի քամիներու ու փրփրած ալիքներու հետ կը զարնուի . նաւակին եղերքն ալ գրած է աս խօսքս . ԴԻՌԻՆՎԻ ԴԻՌԻՆ ԶՆԱ ՄԻՌ ՅԱՂԹԱՀԱՐԵՍՑԵՆ : Առւրբ Այրորդութեն եռանկին նշանը վերէննաւակին վրայ լսս կը սփռէ . կայմին ծայրը սուրբ խաչը տնկած է, առագաստին վրան ալ Աստուածամօր պատկերը, որոնց պաշտպանութեամբը ամէն ալիքներուն դէմկը գնէ . աս բարձրաքանդակին ալ աջ կողմն են Արիութիւնն ու Օգոնութիւնը, ձախ կողմն ալ Հռովմայ մեծ հրապարակը ու Վրիգորեան թանգարանը՝ որ Արբազանին հաստատածն ու ծաղկեցուցածն է . չոն կ'երևնան նաև գեղարուեստից նշաններն ու մըցանակները, որոցմով օրէ օր կը քաջալերուին ասոնց ետեւէ եղողները :

Այրորդ բարձրաքանդակին է Վրիգատուան մերոյ համբարձումը, որովհետեւ նոյն օրը Վրիգոր ԺԶ քահանայապետը ձեռք առաւ կաթուղիկէ եկեղեցւոյ կառավարութիւնը : Այրին ու Արդարութիւնը երկու կող-

մը քանդակուած ըլլալով, զինքը ա-  
մենուն սիրելի ընող առաքինութիւն-  
ները կը ցուցընեն . ասոնց վրայ ալ  
այլեայլնշաններ կան որ քրիստոնեայ  
հաւատացելոց իրենց հովուին վրայ  
ունեցած յարգութիւնը, հնազան-  
դութիւնը և սէրը կը յայտնեն :

Սորրորդ բարձրաքանդակին մէջ  
կը ցուցընէ Արբազանին ջերմեռան-  
դութիւնն ու վստահութիւնը որ ու-  
նի առ սուրբ Աստուածածինն, ու ա-  
նով ինքինքը և զեկեղեցին անոր  
պաշտպանութեանը կը յանձնէ . իրեն  
պաշտպան սուրբերն ալ քովը կեցած՝  
իր գործոցը յաջողութիւն կը մաղթեն :  
Երկու հրեշտակ ալ կայ, մէկը ձի-  
թենիի ձիւղառած՝ մէկալին ալ ձեռ-  
քը գիրք մը վրան աս խօսքս գրած .  
ԴՐԻԳՈՒ Ճ. ԽՕՍԵՍՑԻ ԶԽԱՂԱՂՈՒ-  
ԹԻՒՆ . ուրիշ հրեշտակ մըն ալ քնա-  
րով կ'երգէ : Պատկերին երկու քո-  
վերն են Հաւատքն ու Յոյսը . անոնց  
վրայ ալ կ'երենան Աստիայի տաճա-  
ռը, և եւոնի ժիշտիմը, և ուրիշ գի-  
տութեանց նշաններ որ աս Արբազա-  
նին ջանքովը շատ ծաղկեցան :

Աս արձանին գեղեցկութիւնը ան-  
կարելի է գրով նկարագրել . որով-  
չետեւ միայն Ֆաարիսի գրիչը կրցեր  
է տալ ան երեսին և ձեռուըներուն  
փափկութիւնը, որ ինչուան երակ-  
ներն ալ կ'որոշուին . ան շապկին՝ ու-  
րարին և շուրջառին սքանչելի ծալ-  
քերը, և անոնց վրայի ամենաբարակ  
զարդերը :

Այսպիսի անգին գանձը աս տարի  
յունուարի 15<sup>ն</sup> անակնկալ կերպով  
մը մեր սուրբ Ա ազարու Ա անքին  
դուռը հասաւ յանկարծ շոգենաւով .  
ու անպատմելի ուրախութեան պատ-  
ճառ եղաւ բոլոր միաբանից . որ ի-  
րենց ցնծութիւնն ու երախտագի-  
տութիւնը յայտնի ընելու համար ո-  
րոշեցին որ աս արձանին նաւակա-  
տեաց հանդէսը ընեն փետրուարի 25<sup>ն</sup>,  
որովհետեւ ինչպէս որ ըսինք՝ ան օրը  
Արբազանին քահանայապետութեա-  
նը տարեդարձն էր :

( Կրերով առաջ քաղաքիս ամէն մե-  
ծամեծները հրաւիրուեցան, որոնց  
մէջ էր նաև Պորտոյի դուքսը, և քա-  
ղաքիս ծիրանաւոր պատրիարքը Յա-  
կոր Աննիկոյ և ամէն եկեղեցական՝  
քաղաքական ու զինուորական իշխա-  
նաւորները, այլևայլ տէրութեանց  
գեսպանները ու կրօններու մեծա-  
ւորները . և ան օրը կէս օրուընէ ետ-  
քը ամէն հրաւիրեալները Ա անքիս  
մեծ գրատունը ժողվուեցան . վամն զի  
հոն արձանը առաջուց գրուած, ու  
վրանաձև փառաւոր ամպհովանիի մը  
տակ ծածկած էր : Պատրիարքը ա-  
ռաջ անցաւ, ու արձանին վարագոյ-  
րը բացած ժամանակը՝ սկսան վա-  
րէն հնչել երեսունէն աւելի երա-  
ժիշտներ իրենց նուագարանները .  
քիչ ատենէն երբոր առջի երգը լըն-  
ցաւ, ու ամէնքը բազմեցան, գերա-  
պատիւ Պատրիարքը գեղեցիկ ձառ-  
մը խօսեցաւ, որուն հայերէն թարգ-  
մանութիւնը ուրիշ ատեն կը դնենք :  
Ճառախօսութենէն ետեւ երաժիշտ-  
ները նորէն սկսան երգել սրբազան  
Քահանայապետին տարեդարձինյի-  
շատակ երգ մը . նոյն միջոցին ամէն  
հանդիսականաց մէյմէկ իտալերէն  
տպուած տետրակ բաժնուեցաւ որ  
արձանին ստորագրութիւնն ու քանի  
մը անձանց ան օրուան համար շինած  
ոտանաւորներու հաւաքումն էր : Ան-  
կէց ետեւ հանդիսականները արձանը  
զննեցին գովեցին, ու մեր միաբանու-  
թեանը շնորհաւորութիւններ և ու-  
րախակցութիւններ ընելով, նուա-  
գարաններու ձայներով իրենց տեղը  
դարձան :

Հ. Օ. ԳՈՒՐԳ.: